UFAR
UNIVERSITÉ FRANÇAISE EN ARMÉNIE

**2023-2024 ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՔՆՆԱԿԱՆ ՆՄՈՒՇ**

**CONCOURS D'ENTREE 2023-2024**

# Հայոց լեզվի քննություն արտասահմանցի դիմորդների համար

# Arménien pour les candidats étrangers

Temps imparti / Ժամանակը: 150 minutes / 150 րոպե
Les dictionnaires ne sont pas autorisés. /Բառարանների գործածումն արգելվում է:

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

**Առաջադրանք 1. (40 միավոր)**

Յուրաքանչյուր հարցի ճիշտ և ամբողջական պատասխանը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

Ամեն հարցի պատասխանը պետք է գրել անմիջապես դրանից հետո եղած տողերի վրա:

**Առաջադրանք 2. (40 միավոր)**

Վերնագրին համապատասխան բովանդակությամբ, սահմանված ծավալով և առանց սխալների շարադրանքը գնահատվում է 20 միավոր:

***Յուրաքանչյուր ուղղագրական սխալի համար հանվում է 1 միավոր: Յուրաքանչյուր կետադրական, ոճական և հարակից այլ սխալի համար հանվում է 0,5 միավոր:***

Նմուշ

1. Կարդալ բնագիրը և պատասխանել հարցերին *(40 միավոր):*

Թշնամու հանկարծակի հարձակումներից զգուշանալու համար ժողովուրդը լեռան ստորոտին՝ հինավուրց վանքի գագաթին, մի զանգ էր կախում, որն իր զողանջները տարածում էր հեռու՜- հեռու, որպեսզի մարդիկ նախապես իմանային մոտալուտ վտանգի մասին: Լենկ -Թեմուրը, հասնելով Արաքսի կանաչազարդ ափը, դաշտում իր բանակն է տեղավորում: Հաջորդ օրը զորքը պիտի արշավեր՝ գյուղերը թալանելու, ժողովրդին կոտորելու: Առավոտյան նրա վրանն է մտնում մի դավաճան իշխան և հայտնում է փրկարար զանգի մասին: Լենկ -Թեմուրը նրան առաջարկում է պոկել զանգի լեզվակը, ինչի դիմաց տալիս է շատ ոսկի և արծաթ: Դավաճանն իր համախոհների հետ գիշերով գողանում է ժողովրդի «փրկիչ» զանգի լեզվակը՝ մեկընդմիշտ կտրելով նրա զրնգուն ձայնը: Վանքի վանահայրը, իմանալով թշնամու մոտենալու մասին, բարձրանում է զանգակատուն և քաշում է պարանը, բայց զանգը լուռ էր... Թշնամու հանկարծակի գրոհից մարդիկ զարմացած հարցնում էին՝ զանգն ուր է, զանգն ուր է: Եվ իբրև պատասխան լեռներն արձագանքում էին՝ զանգը զո՛ւր է, զանգը զո՛ւր է:
Ասում են՝ այս տխուր պատմությունից էլ առաջացել է Զանգեզուր անունը:

**Ա) Ի՞նչ է որոշում անել ժողովուրդը թշնամու հանկարծակի հարձակումներից զգուշանալու համար:**

-----------------------------------------------------------------------------------------

-----------------------------------------------------------------------------------------

-----------------------------------------------------------------------------------------

-----------------------------------------------------------------------------------------

**Բ) Ի՞նչ է առաջարկում անել Լենկ-Թեմուրը դավաճան իշխանին:**

-----------------------------------------------------------------------------------------

-----------------------------------------------------------------------------------------

-----------------------------------------------------------------------------------------

-----------------------------------------------------------------------------------------

**Գ) Ինչպե՞ս է փորձում վանքի վանահայրը զգուշացնել ժողովրդին վտանգի մասին:**

-----------------------------------------------------------------------------------------

-----------------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

Դ) Որտե՞ղ է Լենկ-Թեմուրը տեղավորում իր բանակը Զանգեզուրի վրա հարձակվելու համար:

--------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

*2. Գրել շարադրություն «Իմ դպրոցական ընկերը» թեմայով (10-12 նախադասություն. 40 միավոր):*

--------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

-------------------------------------------------------------------------------- :